



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/8288-2025

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1.«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-1008-13.02.2025-SՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2.Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի մարտի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 206-Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Ագնեսա Առաքելյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչություն
Հեռ. 515403
Էլ փոստ՝ agnes.aarakelyan@gov.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-1008-13.02.2025-SՀ-011/0)ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտնում է հետևյալը.

Նախագծով առաջարկվում է չեղարկել ՀՀ հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված՝ ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգի կիրառությունը:

Միաժամանակ, առաջարկվում է սահմանել, որ մինչև օրենքի ուժի մեջ մտնելը ֆիզիկական անձանց կողմից ներկայացրած եկամտային տարեկան հաշվարկները (հայտարարագրերը) չեն կարող օգտագործվել պետական իրավասու մարմինների կողմից իրականացվող վարչարարության շրջանակներում:

Նախագծի ընդունման հիմնավորման համաձայն՝ ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգը ժամանակավրեպ է, դրված նպատակի տեսանկյունից՝ ոչ լիարժեք և ոչ համարժեք, իսկ քաղաքացիների համար դառնալու է նոր և ավելորդ վարչարարություն, անիմաստ պարտավորություն և տուգանքի հիմք, իսկ պետության տեսանկյունից դառնում է արդեն իսկ առկա տեղեկատվության կրկնակի կամ եռակի հավաքագրման անիմաստ և անարդյունավետ գործընթաց: Նշվում է նաև, որ առկա են ոչ պակաս կարևոր տեխնիկական ու բովանդակային չլուծված այլ խնդիրներ, որոնք փաստում են, որ հարկային մարմինները ևս պատրաստ չեն ընդունելու այդ հայտարարագրերը:

Վերոգրյալի կապակցությամբ, հայտնում ենք, որ ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգի ներդրման հիմնական նպատակներն են՝

- ստեղծել և կայացնել ֆիզիկական անձանց եկամուտների անձնավորված հաշվառման համապարփակ համակարգ, ինչը հնարավորություն կընձեռի առավել հեշտությամբ և ճշտության ավելի բարձր աստիճանով տեղորոշել ոլորտային քաղաքականություն-

ների իրական շահառուներին՝ դրանով իսկ բարձրացնելով Կառավարության կողմից իրականացվող առողջապահական, սոցիալական, կրթական և այլ ոլորտային քաղաքականությունների հասցեականությունն ու արդյունավետությունը,

- հայտարարագիր ներկայացնելու համար ստեղծել տնտեսական շարժառիթներ, ի դեմս «սոցիալական ծախսերի» համակարգի ներդրման: Այս համակարգի կայացումը կարևոր ներդրում կլինի մարդկային կապիտալի զարգացման ուղղությամբ, քանի որ համակարգն ինքնին խրախուսելու է կրթական և առողջապահական ծառայությունների ձեռք բերումը,

- փորձ կատարել անհատի, քաղաքացու հարկման համակարգից աստիճանաբար անցում կատարել ընտանիքի հարկման համակարգի,

- ամրապնդել հասարակության շրջանում հարկեր վճարելու մշակույթը,

- ձևավորել հարմարավետ հարկային միջավայր և գործիքակազմ ֆիզիկական անձանց եկամուտների և դրանց մասով վճարված հարկերի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմնի կողմից հաշվառելու, ինչպես նաև քաղաքացիների կողմից եկամտային հարկի գծով պարտավորություններն ինքնուրույնաբար կատարելու համար:

Բացի այդ, հարկ է նկատել, որ հայտարարագրման համակարգի ներդրման շրջանակում հարկային քաղաքականության փոփոխություններ չեն կատարվել՝ որևէ չհարկվող եկամուտ չի դարձել հարկվող եկամուտ, հարկվող եկամտի հարկման որևէ դրույքաչափ չի բարձրացվել: Հետևաբար, հայտարարագրման համակարգի ներդրմամբ պետական բյուջեի եկամուտների ավելացման (լրացուցիչ հարկային պարտավորություններ առաջադրելու կամ տուգանքներ կիրառելու) նպատակ չի դրվել:

Հատկանշական է այն, որ ֆիզիկական անձանց ստացված ոչ բոլոր եկամուտների վերաբերյալ է հարկային գործակալի կողմից հարկային մարմին անձնավորված տեղեկատվություն ներկայացվում: Օրինակ, հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձից գույք ձեռք բերելու դեպքում վերջինիս վճարված եկամուտների վերաբերյալ անձնավորված տեղեկատվություն հարկային գործակալի կողմից հարկային մարմին չի ներկայացվում: Բացի այդ, եթե ֆիզիկական անձը եկամուտներ է ստանում այլ ֆիզիկական անձանցից կամ հարկային գործակալ չհանդիսացող կազմակերպություններից, ապա այդ եկամուտները հայտարարագրելու պարտավորությունը կրում է եկամուտ ստացող ֆիզիկական անձը:

Մյուս կողմից, հարկ է նկատել, որ ֆիզիկական անձանց ստացված եկամուտների, դրանց մասով հաշվարկված եկամտային հարկի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների

կոմիտեում առկա անձնավորված տեղեկատվությունը ինքնաշխատ եղանակով լրացվում է հայտարարագրում: Հետևաբար, ֆիզիկական անձանց եկամուտների անձնավորված հաշվառման համապարփակ համակարգ հնարավոր կլինի ունենալ, եթե ֆիզիկական անձինք նույնպես ներկայացնեն իրենց ստացված եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն:

Այս առումով, հայտնում ենք, որ Նախագծի ընդունման հիմնավորման մեջ նշված՝ կրկնակի, եռակի տեղեկատվություն հավաքագրելու հետ կապված դիտարկումը հիմնավոր չէ:

Բացի այդ, հարկ է նկատել, որ սոցիալական ծախսի գումարները վերադարձվում են եկամտային հարկի գումարներից, իսկ եկամտային հարկի գումարները ոչ բոլոր դեպքերում են հաշվարկվում և վճարվում հարկային գործակալների կողմից: Օրինակ, այն դեպքերում, երբ ֆիզիկական անձը հարկվող եկամուտներ է ստանում այլ ֆիզիկական անձից, ապա այդ եկամուտներից եկամտային հարկը հաշվարկելու և վճարելու պարտավորությունը կրում է եկամուտ ստացող ֆիզիկական անձը: Հետևաբար, «սոցիալական ծախսերի» համակարգի կիրառությունը ուղղակիորեն պետք է կապված լինի եկամուտների հայտարարագրման համակարգի հետ: Ընդ որում, «սոցիալական ծախսերի» համակարգի կիրառությամբ աստիճանաբար մոտենում ենք զարգացած աշխարհում հաջողությամբ կիրառվող՝ ընտանիքի հարկման մոդելին (նաև այն պատճառով, որ հայտարարատու ֆիզիկական անձինք կարող են հետ ստանալ նաև իրենց ընտանիքի անդամների համար կատարած ծախսերը), որն ավելի առաջադեմ ու արդար հարկման մոդել է:

Կարևոր է նշել նաև, որ ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգի ներդրումը նպաստելու է հասարակության շրջանում հարկեր վճարելու մշակույթի զարգացմանը՝ մասնավորապես, հաշվի առնելով այն, որ հայտարարագիր ներկայացնելով ֆիզիկական անձինք տեղեկանալու են իրենց անվանական եկամուտների, դրանցից պահված հարկերի վերաբերյալ:

Նախագծի ընդունման հիմնավորման մեջ նշված՝ ստվերային (չգրանցված) եկամուտներ առկա լինելու դեպքում քաղաքացիների կողմից դրանք հայտարարագրման համակարգի ներդրումից հետո կրկին չհայտարարագրելու հետ կապված դիտարկման վերաբերյալ հայտնում ենք, որ ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգի ներդրումը նպաստելու է նաև այդ եկամուտներն աստիճանաբար հայտարարագրելուն՝ մասնավորապես, հաշվի առնելով այն, որ այդ եկամուտներից հաշվարկված հարկերը հետ ստանալու հնարավորություն է ստեղծված՝ ի դեմս «սոցիալական ծախսերի» համակարգի:

Ինչ վերաբերում է, նախագծի ընդունման հիմնավորման մեջ նշված՝ հայտարարագրի էլեկտրոնային եղանակով ներկայացումը քաղաքացիների որոշ շրջանակի (տարեցներ և այլն) համար դժվարություններ առաջացնելու, ֆիզիկական անձանց կողմից հայտարարագրեր չներկայացվելու, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հայտարարագրման համակարգի՝ հայտարարագրերի ընդունմանը պատրաստ չլինելու հետ կապված դիտարկումներին, ապա հայտնում ենք հետևյալը.

Եկամտային հարկի հաշվարկների (հայտարարագրերի) ներկայացման ընթացակարգը հնարավորինս պարզ և դյուրին դարձնելու նպատակով աշխատանքներ են իրականացվում «Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ»-ը շարունակաբար պարզեցնելու ու բարելավելու ուղղությամբ: ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքէջում տեղադրված են բազմաթիվ հրապարակումներ, ուղեցույցներ այն մասին, թե ինչպես օգտվել «Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ»-ից, ինչպես լրացնել եկամտային հարկի հաշվարկը (հայտարարագիրը), ընդ որում՝ ուղեցույց և լրացման կարգ տեղադրված է նաև համակարգում: Համակարգում առկա է նաև առցանց օգնական (ChatBot), որի միջոցով ֆիզիկական անձը կարող է կապ հաստատել և ստանալ իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները: Այստեղ տեղադրված են նաև հաճախ տրվող հարցեր՝ իրենց պատասխաններով:

Միաժամանակ, հայտնում ենք, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներդրված՝ «Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ»-ը բնականոն գործում է, և ֆիզիկական անձանց կողմից ներկայացվում են հայտարարագրեր: Ընդ որում, 2025 թվականի փետրվարի 19-ի դրությամբ 2024 թվականի հաշվետու տարվա համար եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) է ներկայացրել թվով 7975 ֆիզիկական անձ, իսկ 2023 թվականի հաշվետու տարվա համար՝ թվով 59120 ֆիզիկական անձ:

Միևնույն ժամանակ, հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2014 թվականի դեկտեմբերի 2-ի ՍԴԴ–1176 որոշմամբ անդրադառնալով օրենքների հիմնավորվածությանը, արձանագրել է. «(...) օրենսդրությունն ստատիկ երևույթ չէ, այն կարող է և պետք է ենթարկվի դինամիկ փոփոխության՝ մշտապես կատարելագործվելով տնտեսական զարգացմանը, տեղի ունեցող միջազգային ինտեգրման գործընթացներին, հասարակական հարաբերությունների վերափոխմանն ու մի շարք այլ գործոններին համահունչ: (...)»

Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանը կարևորում է օրենսդրական փոփոխությունների գործընթացի կայունությունն ու ներդաշնակությունը, օրենսդրական նախաձեռնության կարգով օրենքների փոփոխման հիմնավորվածությունն ու օբյեկտիվ անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն է ընձեռում իրավունքի սուբյեկտին իր վարքագիծը համապատասխանեցնել փոփոխվող օրենսդրական նորմերին՝ թույլ չտալով իրավակիրառ մարմինների կողմից ցուցաբերված սուբյեկտիվիզմի դրսևորում և հայեցողության ընդլայնում:»:

Այս առումով, հայտնում ենք, որ նախագծի ընդունման հիմնավորմամբ առկա իրավիճակի խորքային վերլուծություն, խնդիրների վերհանում չի իրականացվել և ներկայացվել է ապագայում ենթադրյալ առաջացող խնդիրների վերլուծություն: Մինչդեռ, անհրաժեշտ էր բացահայտել ոլորտի ընթացիկ իրավիճակը, խնդիրները, առաջարկվող կարգավորումների անհրաժեշտությունը, վերլուծել նախատեսվող կարգավորումների ռիսկային գործոնները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման համակարգի չեղարկման առաջարկությունը սկզբունքորեն անընդունելի է:

Հայտնում ենք նաև, որ նախագիծը չի բխում Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի 6.8-րդ «Հարկաբյուջետային քաղաքականություն» մասով սահմանված քաղաքականության ուղղություններից, ըստ որի ներդրվելու է ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման գործուն համակարգ, որը կնպաստի նաև միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող «սոցիալական կրեդիտների» համակարգի ներդրմանը:

ՆԱԽԱԳԻԾ

Խ-1008-13.02.2025-SՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 156-րդ հոդվածի 4.1-ին մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ֆիզիկական անձանց կողմից ներկայացրած եկամտային հարկի տարեկան հաշվարկները (հայտարարագրերը) չեն կարող օգտագործվել պետական իրավասու մարմինների կողմից իրականացվող վարչարարության շրջանակներում:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը). Նախագծի նպատակը Հայաստանի Հանրապետությունում փուլային եղանակով եւ գործող օրենսդրությամբ սահմանված ձեռով ներդրվող եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր) ներկայացնելու համընդհանուր պահանջի չեղարկումն է, որը ժամանակավրեպ է, դրված նպատակի տեսանկյունից՝ ոչ լիարժեք եւ ոչ համարժեք, իսկ քաղաքացիների համար դառնալու է նոր եւ ավելորդ վարչարարության, անիմաստ պարտավորության եւ տուգանքի հիմք:

2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը եւ առկա խնդիրները. 2022 թվականի դեկտեմբերի 23-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-593-Ն օրենքով նախատեսված է ներդնել քաղաքացիների տարեկան եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգ՝ երեք փուլերով:

Մանավորապես, նշված օրենքի համաձայն՝ ֆիզիկական անձինք եկամտային հարկի տարեկան հաշվարկները (հայտարարագրերը) պարտավոր են ներկայացնել հետեւյալ ժամկետներում.

1) 2023 թվականի հաշվետու տարվա համար՝

ա. 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության եւ (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

բ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսանում են (հանդիսացել են) 2022 թվականի արդյունքներով մեկ միլիարդ դրամ եւ ավելի համախառն եկամուտ հայտարարագրած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ առեւտրային կազմակերպության մասնակից (բաժնետեր, փայատեր, անդամ),

գ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրական շահառու են համարվում,

դ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2023 թվականի ընթացքում ստացել են 20 միլիոն դրամի չափով կամ ավելի փոխառություն.

2) 2024 թվականի հաշվետու տարվա համար՝

ա. 2024 թվականի ընթացքում վարձու աշխատող համարված՝ սույն պարբերության 1-ին կետում չնշված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

բ. 2024 թվականի ընթացքում քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում հարկվող եկամուտ ստացած՝ սույն պարբերության 1-ին կետում չնշված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

գ. 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության եւ (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

դ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսանում են (հանդիսացել են) 2023 թվականի արդյունքներով մեկ միլիարդ դրամ եւ ավելի համախառն եկամուտ հայտարարագրած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ առեւտրային կազմակերպության մասնակից (բաժնետեր փայտեր, անդամ),

ե. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրական շահառու են համարվում,

զ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2024 թվականի ընթացքում ստացել են 20 միլիոն դրամի չափով կամ ավելի փոխառություն,

է. սույն պարբերության 1-ին կետում նշված ֆիզիկական անձինք.

3) 2025 թվականի հաշվետու տարվա եւ դրան հաջորդող տարիների համար՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

Քաղաքացիների եկամուտների համընդհանուր հայտարարագրման վերաբերյալ առկա կարգավորումները խնդրահարույց են հետեւյալ ամփոփ հիմնավորումներով.

1) Ակնհայտ է, որ եթե հայտարարագրման ենթակա քաղաքացին ունի ստվերային (չգրանցված) եկամուտներ, որոնք արտացոլված չեն եկամտահարկի միասնական անձնավորված համակարգում, ապա նա այդ եկամուտները չի ներառելու նաեւ իր տարեկան հայտարարագրում:

2) Անօրինական եկամուտների հայտնաբերումը եւ օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումը այսպես, թե այնպես մնալու է հարկային մարմինների հսկողության եւ վերահսկողության ներքո: Եկամուտների տարեկան հայտարարագրումը ստվերի կրճատման տեսանկյունից էական ազդեցություն չի կարող ունենալ, եթե զուգահեռաբար չի գործում ծախսերի ամբողջական հաշվառման համակարգը:

3) Գործող կարգավորմամբ նախատեսված է, որ հարկային մարմինն՝ իր տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա ինքնաշխատ եղանակով նախալրացնելու է ֆիզիկական անձանց հայտարարագրերի նախագծերը, որոնք կարող են հաստատվել կամ լրամշակվել հայտարարագրման ենթակա քաղաքացու կողմից: Այսինքն՝ եկամտահարկի միասնական անձնավորված համակարգում արտացոլված եկամուտների մասին ամբողջական տեղեկատվությունը արդեն իսկ տիրապետում են հարկային մարմինները ողջ ծավալով: Հետեւաբար՝ նույն տեղեկատվությունը եկամուտների տարեկան հայտարարագրի ձեռով հարկային մարմիններին նորից ներկայացնելը դառնում է ավելորդ վարչարարություն եւ անիմաստ պարտավորություն քաղաքացիների համար: Ընդ որում՝ էլեկտրոնային եղանակով այս հայտարարագրերի ներկայացման գործընթացը էական եւ օբյեկտիվ դժվարություններ է առաջացնելու քաղաքացիների լայն շրջանակների համար, հատկապես՝ տարեցներ, ինտերնետային հասանելիություն չունեցող քաղաքացիներ, գրագիտության ցածր մակարդակ ունեցող քաղաքացիներ եւ այլն:

4) Հայտարարագիրը հարկային մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելն առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ նախազգուշացում, տետո էլ՝ տուգանք: Փաստորեն քաղաքացին նորից դառնում է «տուգանքի մատերիալ»՝ անիմաստ եւ ավելորդ պարտավորությունը չկատարելու կամ ժամկետանց կատարելու համար:

5) Կեղծ են նաեւ այս համակարգի իբրեւ դրական՝ խթանիչ հնարավորությունները: Նախ՝ հայտարարագիր չներկայացնող քաղաքացիներին եւս հարկային մարմինը տրամադրում է էլեկտրոնային ծառայություններ: Հետո՝ առանց հայտարարագրի պարտադիր պահանջի էլ պետությունը կարող է քաղաքացիներին փոխհատուցել սոցիալական ծախսերի որոշակի մասը, եթե իրականում կա նման ցանկություն, ինչպես դա արվում է տարիներ շարունակ գործող՝ հիփոթեքային վարկի տոկոսների փոխհատուցման ծրագրով: Այս կարգավորումը հակասում է նաեւ ՀՀ Սահմանադրության պահանջին, ըստ որի՝ քաղաքացիների իրավունքներ եւ պարտավորություններ սահմանող նորմերը պետք է սահմանվեն օրենքով: Իսկ նախագծով կառավարությանն են վերապահվում սոցիալական ծախսերի տեսակների առանձին ուղղությունների, ընտանիքի անդամների շրջանակի եւ փոխհատուցման առավելագույն չափերի սահմանումն ու փոփոխությունները: Օրենքով չսահմանվելու դեպքում կառավարությունն ունենում է անսահման հայեցողություն եւ կարող է կատարել իրավիճակից բխող փոփոխություններ, օրինակ՝ եկամտահարկի վերադարձի առավելագույն չափերի էական նվազեցումներ:

6) Համընդհանուր հայտարարագրման համակարգի ներդրման արդյունքում ակնկալվում է ունենալ եկամուտների անձնավորված հաշվառման համապարփակ համակարգ, որով հնարավոր կլինի ճշտության ավելի բարձր աստիճանով տեղորոշել ոլորտային քաղաքականությունների իրական շահառուներին՝ դրանով իսկ բարձրացնելով հասցեականությունն ու արդյունավետությունը: Այս նպատակը եւս չունի գործնականում իրացման առարկայական ներուժ, քանի որ եկամուտների անձնավորված հաշվառման միասնական համակարգում չարտացոլված՝ անօրինական եկամուտները, բնականաբար,

հայտարարատուի կողմից չեն ներառվելու նաեւ իր եկամուտների տարեկան հայտարարագրում:

Այսինքն՝ նույն տեղեկատվության կրկնակի, եռակի հավաքագրումը չի կարող ապահովել ավելի բարձր ճշտության աստիճան պետական աջակցության ծրագրերի ներուժային շահառուների վերաբերյալ:

3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Նախագծով առաջարկվում է վերացնել փուլային եղանակով ներդրվող՝ քաղաքացիների տարեկան եկամուտների համընդհանուր հայտարարագրման օրենքով սահմանված խնդրահարույց պահանջը եւ դրանից բխող՝ վարչական պատասխանատվությունը: Հատկանշական է նաեւ, որ այս պահանջի խնդրահարույց բովանդակության հետեւանքով է նաեւ, որ նախորդ տարի հայտարարագրման ենթակա քաղաքացիները հիմնականում չեն ներկայացրել հայտարարագիր, որի մասին նորից լուռ են ոլորտի պատասխանատուները:

4. Կարգավորման առարկան. Նախագծի կարգավորման առարկան օրենքով սահմանված՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր) ներկայացնելու համընդհանուր պահանջն է, որի գործադրումը նախատեսված է փուլային տարբերակով:

5. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը. Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է վերացնել քաղաքացիների եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր) ներկայացնելու համընդհանուր պահանջը, որը բացարձակապես չի համապատասխանում նախապես սահմանված նպատակներին, քաղաքացիների համար հանդիսանում է նոր եւ ավելորդ վարչարարության, անիմաստ պարտավորության եւ տուգանքի հիմք, իսկ պետության տեսանկյունից՝ իրականում դառնում է արդեն իսկ առկա տեղեկատվության կրկնակի կամ եռակի հավաքագրման անիմաստ եւ անարդյունավետ գործընթաց: Ի դեպ, այս տարվա սկզբին Ազգային ժողովում եւ հանրային այլ հարթակներում ծավալված քննարկումները եւս մեկ անգամ ապացուցեցին այս խնդիրների հիմնավորվածությունը, ինչպես նաեւ առկա եւ ոչ պակաս կարելու տեխնիկական ու բովանդակային չլուծված այլ խնդիրները, որը փաստում է նաեւ, որ հարկային մարմինները եւս պատրաստ չեն՝ ընդունելու այդ հայտարարագրերը:

6. Նախագծի ընդունումը լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չի պահանջում, իսկ դրա ընդունմամբ պայմանավորված՝ պետական բյուջեի եկամուտների էական նվազեցում կամ ծախսերի ավելացում տեղի չի ունենա:

Տեղեկանք

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում այլ օրենքներում փոփոխություններ չեն նախատեսվում, սակայն պետք է ընդունվեն օրենքի կիրարկում ապահովող կառավարության որոշումներ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԴԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 206 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՉԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում

☒Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին☒
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Խ-1008-13.02.2025-ՏՀ- 011/0) քննարկելիս
Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

13.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ